ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱԽՈՒՐՅԱՆԻ
«ԲԱՍԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք,
Հասցե գ. Բասեն 1բ փ. թիվ 1 շենք
էլ. փոստ basenhoak@inbox.ru

<<12>> օգոստոսի 2024 թվական

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզի «Բասենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է N 2 «ՇՄԲԱՍ-ԳՀԱՊՁԲ-24»-2 ծածկագրով սննդամթերքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետով սահմանված է՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն մատակարարի կողմից բազմաթիվ անգամներ եղել են պայամանգրային պարտավորությունների խախտումներ, ինչի արդյունքում գրավոր տեղեկացվել և զգուշացվել է պայամանգրի կողմին: Պայամանագրի կողմ հանդիսացող «Տատյանա Բետանյան» Ա/Ձ-ն ապրանքները մատակարարել է անորակ և ժամկետների խախտումներով, ինչի արդյունքում էլ խաթարվել է մանկապարտեզի բնականոն ընթացքը:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի «Բասենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի N 2 «ՇՄԲԱՍ-ԳՀԱՊՁԲ-24»-2 -ի ՝ 2.1.7.1 կետի՝ պայմանագիրը միակողմանի լուծարվել է, քանի որ վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը .

ա) մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել մեզ համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները մի քանի անգամ խախտվել են 2 օրից ավելի:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 5 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. օգոստոսի 16-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման վճարների փոխանցումը 220375140096000 հաշվեհամարին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում ՀՀ Շիրակի մարզի «Բասենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով. Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Եթե մասնակիցը վճարումը է վերը նշված ապահովումները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի ներակայցնում լիազորված մարմին:

Հարգանքով տնօրենի փոխարինող Հ.Առաքելյան